ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆՁԱՆՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի մարտի 6-ի N 247-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մարտի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2024 թվականի հոկտեմբերի 8-ին Մոսկվայում՝ Պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով: Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի նոյեմբերի 14-ին Ազգային ժողովի ԱԺՈ-254-Ն որոշմամբ (ՍԴՈ-1045)՝ վերապահումով:

2. Պայմանագրում՝ Արձանագրությամբ կատարվող փոփոխության նպատակն է Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների իրավասու մարմինների, ինչպես նաև անվտանգության և իրավակարգի ոլորտում գործող ԱՊՀ ոլորտային մարմինների միջև տեղեկատվական փոխանակման ամրապնդումը:

Արձանագրությամբ նախատեսված փոփոխությունները հնարավորություն են նախատեսում ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների համար՝ տեղեկատվական փոխհամագործակցության շրջանակներում կիրառել փաստաթղթի էլեկտրոնային պատճենը (թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճենը):

3. Արձանագրությունն ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության (վերապահումով), Հայաստանի Հանրապետության (վերապահումով), Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

4. Արձանագրությամբ՝ Պայմանագրում կատարվող փոփոխությունները հանգում են հետևյալին.

4.1. Պայմանագրի 1-ին հոդվածը լրացնել «ը» կետով, հետևյալ բովանդակությամբ՝

«ը) **փաստաթղթի էլեկտրոնային պատճեն (պատկեր)՝** թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցներով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճեն» (հոդված 1, մաս 1),

4.2. Պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) փաստաթղթի էլեկտրոնային պատճենի (պատկերի) տեսքով՝ գերատեսչական էլեկտրոնային փոստի ծառայությունների միջոցով՝ հետագայում ուղարկելով բնօրինակը (անհրաժեշտության դեպքում),» (հոդված 1, մաս 2):

5. Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանվում է, որ Սրձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո և ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ

գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

6. Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է վերապահումով, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ կմտնի և կկիրարկվի Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան, որով միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառում չի նախատեսվում:

7. Արձանագրության ժամանակավոր կիրառման կապակցությամբ վերապահում է կատարել նաև Ադրբեջանը՝ նշելով, որ Ադրբեջանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի սույն Արձանագրությունը դրա ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո:

8. Ըստ դիմումին կից ներկայացված Արտաքին գործերի նախարարության Արձանագրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի՝ 2024 թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել և այն ժամանակավորապես կիրառվում է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1779